ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ապրանքի ծագման տեղանուններ

Գրանցման համար 7

Հայտի համար 2014002

Հայտի ներկայացման թվականը 29.05.2014

Ծագման երկիրը GE

Հրատարկվող տեղանունը AKHASHENI, ԱԽԱՇԵՆԻ, АХАШЕНИ

ԱԾՄԴ-ի դասը 33

Ապրանքի տեսակը կամ կոնկրետ ապրանքը գինի

Ապրանքի հատուկ որակի նկարագրությունը՝

«Ախաշենի»՝ կարմիր բարձրորակ բնական-կիսաքաղցր գինի:

«Ախաշենի» գինին բնութագրվում է կարմիր սուտակի գույնի, ներդաշնակ տեսակին համով, թավշյա, լիարժեք, դուրեկան քաղցրությամբ, մրգային երանգով և տեսակային անուշահոտությամբ:

«Ախաշենի» գինու քիմիական տվյալները պետք է համապատասխանեն հետևյալ ցուցանիշներին.

սպիրտի ծավալային պարունակությունը՝ 10,5-12,0%

շաքարի զանգվածային խտությունը՝ 30-50 գ/ դմ^3 ոչ ավել

տիտրվող թթվությունը՝ 5,0-7,0 գ/դմ^3

ցնդող թթուները՝ 1,2 գ/դմ^3 ոչ ավել

էքստրակտի զանգվածի բերված խտությունը՝ 20գ/դմ^3 ոչ քիչ

ընդհանուր ծծմբի երկօքսիդի զանգվածի խտությունը՝ 210 մգ/դմ^3 ոչ ավել

ազատ ծծմբի երկօքսիդի խտությունը՝ 30 մգ/դմ^3 ոչ ավել:

Կապն աշխարհագրական ծագման հետ՝

«Ախաշենի» միկրոգոտում հումքային բազային տարածքները մոտավորապես կազմում են 112 հա:

Միկրոգոտում ստացվող բերքը միջինը կազմում է 728 տ.: 65 դեկալիտր 1 տոննայից արտադրողականության դեպքում, կարող է արտադրվել 47000 դեկալիտր գինու հումք:

«Ախաշենի» միկրոգոտու դիրքը, միկրոկլիման, ստեղծված Ցիվգոմորյան լեռնաշղթայի անտառոտ լանջերով, կարբոնատային, անտառանման, ավազակավային և գետաբերուկ (ջրաբերուկ)- հեղեղաբերուկ հողերը, տվյալ գոտում Սապերավի խաղողում շաքարի բարձր պարունակությունը որոշում են «Ախաշենի» գինու տարբերակիչ հատկությունները:

Աշխարհագրական գոտին՝ Ախաշենի» խաղողագործության հատուկ գոտին գտնվում է Շիդա Կախեթիայում, Ալազանի գետի միջին մասում, 40°48′ հյուսիսային լայնության և 45°44′ արևելյան երկարության կոորդինատներում, Ալազանի գետի աջակողմյան Չերմիսխևի և Պապրիսխևի վտակների լայնակի ուղղության միջև: Ալազանի գետի երկարությունը հյուսիս-արևելյան ուղղությամբ, սկսած Ախաշենի բնակավայրից կազմում է 9,5 կմ, իսկ հակառակ հարավ-արևմտյան կողմում մինչև Ցիվգոմորյան լեռնաշղթայի գագաթը-14,5 կմ: